## ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ

### ԳԵՐԱԾՆՈՐՀ ՏԵՂԱՊԱՀ ԱԲԲԱ ԱԲՐԱՀԱՄ

**Եթովպիա, Ադիս Աբեբա**

Ուրախ սրտով ողջունում ենք ընտրությունը նոր Պատրիարքի Ձեր պատմական Եկեղեցու, որի գահակալությունը տեղի պիտի ունենա 4 սեպտեմբերին:

Թող Աստված օրհնի Ձեր Սուրբ Եկեղեցին և պահի-պահպանի անսասան և լուսառատ:

Շնորհակալ ենք Ձեր եղբայրական հրավերի համար:

Մենք լիազորել ենք, որ գահակալության հանդիսություններին մասնակցի Եգիպտոսի Հայ Եկեղեցու առաջնորդ Զավեն արքեպս. Չինչինյանը՝ իբրև ներկայացուցիչը Հայ Առաքելական Եկեղեցու:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին,**
**22 օգոստոս 1988 թ.**